«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 9-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դովեղի գյուղական համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Դովեղի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 340-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումը՝

1) որոշման 2-րդ կետում՝

ա. «699.55» թիվը փոխարինել «699.78» թվով,

բ. «40.74» թիվը փոխարինել «40.97» թվով.

2) որոշման 3-րդ կետում՝

ա. «ա» ենթակետում «699.55» թիվը փոխարինել «699.78» թվով,

բ. «բ» ենթակետում «144.62» թիվը փոխարինել «144.39» թվով.

3) որոշման N 4 հավելվածի աղյուսակում՝

ա. «բնակավայրեր» տողի համայնքային սեփականություն հանդիսացող հողերի սյունակում «40.74» թիվը փոխարինել «40.97» թվով, իսկ պետական սեփականություն հանդիսացող հողերի սյունակում «1.55» թիվը՝ «1.32» թվով,

բ. «Ընդամենը» տողի համայնքային սեփականություն հանդիսացող հողերի սյունակում «699.55» թիվը փոխարինել «699.78» թվով, իսկ պետական սեփականություն հանդիսացող հողերի սյունակում «144.62» թիվը՝ «144.39» թվով.

4) որոշման N 6 հավելվածի աղյուսակում՝

ա. «կադաստրային ծածկագիր» սյունակը 015-012 տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

015-013	0.23								բնակելի շենք

»,

բ. «Ընդամենը» տողի «բնակավայրերի հողեր» սյունակում «40.74» թիվը փոխարինել «40.97» թվով.

5) որոշման N 7 հավելվածի աղյուսակի 015-002 կադաստրային ծածկագրով տողի «բնակավայրերի հողեր» սյունակում «0.34» թիվը փոխարինել «0.11» թվով, իսկ «Ընդամենը» տողի «բնակավայրերի հողեր» սյունակում «1.55» թիվը՝ «1.32» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: